

— Զարար էՖ. Գրիգորեան անցեալ շարաթ օր կնքեց մահ-
կանացուն և հեռակեալ օրը կառարուեցաւ յուղարկու որութեան
հանդէսը Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Զորս քարուկիր,
մէկ փայտաշէն տուն և դեռին կտակած է շիւանգանոցի, Երու-
սաղէմի, Գալֆայեան սրբանոցի, և Սամաթիոյ, Պալատի, Էյու-
պի ու Գասըմփաշայի աղքատախնամներու համար: — Կալուած-
ներն 2000 լիբայի չափ կարժեն:

— Էպրասէն կը գրեն «Մանդումէի»: Տեղւոյս վարժարանը,
որ անտեսողէս բաւական կանոնաւոր վիճակ մը ստացած է՝
հիմա շնորհիւ տեղւոյս աղգաշիններէն Յովհաննէս էՖ. Տարը-
ճեանի, որ եկեղեցիին գեանին վրայ բաւական խոշոր բան մը
շինել տուաւ՝ մօտ 400 սոկիի ծախքով: Շէնքը գեռ կը շարու-
նակուի շինուել և եթէ աւարտի, տարեկան 75 սոկիի մօտ հա-
սոցթ մը պիտի աւելնայ վարժարանին տարեկան պիւճակէն
վերայ:

«Արարատի» անցեալ համարներէց մէկում մասնանիշ արինք
Ռու մանիոյ հայ գաղթականութեան բարոյական—կրթական ան-
մխիթարական դրութիւնը, ուր աղգաշին կալուածների եկա-
մուտը մի քանի անաղնիւ հոգաբարձուների գրպանն է մանում
փոխանակ իւր նպատակին ծառայելու: Իսկ մինչև այժմ եղած
գպրոցի շինութիւնն էլ հեռակեալ կերպով են շահագործում:

Ռումանիոյ Բօման քաղաքի հայոց եկեղեցիին հոգաբարձու-
թիւնը տեղւոյն հայ վարժարանը փակել եւ նամակատու ու նե-
րագրատու ըլլալու պայմանաւ վարձու տուեր է:

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՕԳՈՒՔՍ ԵԿԵՂԵՑԻ

Церк. Вѣстанкѣ Թերթը նկարագրում է մի քանի ճարպիկ
ուսանների ստոր շահախնդրական ձեռնարկութիւնները, որոնք
1900 թուի բոհսերական կոնիւնքի վերաբերեալ պատկերները
սկսել են վաճառել իրր ներկայ պատերազմի նկարագիր՝ միամիտ
ժողովրդի գաւն աշխատանքով վաստակած կողէկները կորչելու:
Յիշելով այդ անարդ խաբեքայութիւնը, իրաւացի արտունջ է

յայտնում այդ հետևեալ զուտ խաչագողական ձեռնարկութեան առթիւ.— Ռուսաստանում սկսել են ատրածել նաև նոր հրաշքների նկարագրութեան թերթեր, գլխաւորապէս ի նկատի ունենալով հատարակ ժողովրդի միամիտ ջերմեռանդութիւնը: Այդ հանգամանքն առիթ է տուել Заря թերթին այդ զգուելի գործը «խղճի շահագործութիւն» անուանելու:

Ազահութիւնն այնքան հեռու է տանում և այնպէս է գրգռում մարդկանց ակորթակը, որ մի ինչ որ պարսն չի ամաչել ներկայ հանգամանքներում հրատարակելու հետևեալ մակաղբութեամբ թերթը.— «Նիկողայոս Աբանչելագործի նոր հրաշագործութիւնները մեր օրերում»: Ծառայութեան պատրաստ փողոցային աղաներ (КАМЛО), որոնց թիւը վերջին ժամանակներս չափազանց մեծացել է մեր փողոցներում, վազվզում են և բացահանչում. «Սուրբ Նիկողայոսի նոր հրաշագործութիւններն շեռաւոր Արևելքում.» ժողովուրդը վճարում է շահանոցներ և հրասթափուում, որովհետև այդ թերթերի մէջ նկարագրուած է վաղուց անցած օրերի մի դէպք, որը ակզի է ունեցել չինական պատերազմի ժամանակ: Որ առաջարկը պահանջի հեռանքն է, դրանում կասկած չկայ և շատ բնական է, որ դրավաճառներն օգաւում են հանգամանքից և սաղայնում իրենց հնացած ասլրանքը. դրա համար նրանց չի կարելի խիտ դատապարտել, բայց կասկած չկայ, որ մեր ինտելիգէնցիան արձագանք չի տալիս ժողովրդի հոգեկան պահանջներին և նրա կարգալուծարուն, որը դրազիտութեան հետ միասին աւելի և աւելի մեծանում է: Դրքեր շատ կան, բայց ժողովրդի ընթերցանութեան համար պէտքականները շատ քիչ են: Ժողովրդի տրամադրութեան բորբոքուած ժամանակ, ինչպէս որ այդ ներկայումս է, այդ պահանս աւելի և աւելի զգալի է դառնում»:

Այնուհետև թերթն առաջարկում է հոգևոր ձեմարանի աշակերտներին յանձնարարել, որ նրանք կազմեն ժողովրդի ընթերցանութեան համար կարևոր գրքեր, ինչպէս որ Մոսկվայում հոգևոր ձեմարանի աշակերտները հրատարակել են «Շեռաւոր Արևելք գրքոյի»՝ զինուորներին ձրի բաժանելու համար: Ժողովրդի ընթերցանութեան համար գրքեր, բրօշուրներ և թերթիկներ հրատարակելը մի շատ սիրուն գործ է և այդ ուղղութեամբ արդէն նիկոն վարդապետի ձեռքով գծուած է հարկաւոր շաւղը՝ Տրօյիցիկի թերթերի հրատարակութեամբ:

Перк. ВѢСТНИКЪ թերթն հաղորդում է հետևեալը.— Շեռաւոր Արևելքում ծագած պատերազմի շնորհիւ ժամանակաւորապէս

կանգ առած ներքին բարեփոխութեան վերաբերեալ գործունէութիւնը նորից սկսուած է ստանալ իւր առաջուայ ընթացքը: Առաջին և ամենամօտ խնդիրը գիւղականների վիճակի բարեփոխութիւնն է և շուտով մի քանի նահանգներում կըսկսուին այդ մասին նահանգական խորհրդակցութիւններ:

Բարձրագոյն հրամանով Պետերբերգում գործող մասնաժողովը հնարուոր չգտաւ առանց գործին տեղեակ, փորձուած և գիւղական կեանքին ծանօթ մարդկանց ղեմելու, որոնք կարող կլինին ցոյց տալ տեղական պահանջներն և մասնանկի լինել այս կամ այն միջավայրի առանձնայատկութեան վրայ: Վերջնական եղբակացութեան հասնել: Մասնակցութեան հրաւիրող անձերի ընտրութիւնը կախուած կլինի նահանգապետներից, որոնք և նախագահելու են այդ ժողովներին: МОСК. ВѢДОМОСТИ թերթը մասնանկի է լինում թեկնածուների վրայ և ի միջի այլոց առաջարկում է խորհրդակցութեան հրաւիրել նաև գիւղական քահանաներին:

«Մենք կարծում ենք, տուում է յիշեալ թերթը, որ ամենալաւ խորհրդական կլինին դաւառական այն ձայնաւորներն, որոնք կապուած են հողի հետ, ապրում են միշտ միևնոյն տեղում, գիւղի հետ մշտական յարաբերութեան մէջ են և մօտից՝ անմիջապէս գիտեն նրա կարիքները: Այդ տեսակէտից անկասկած օգտակար կլինի լսել իրենց՝ գիւղացիների ձայնը և ոչ թէ այն գինեվաճառների և խանութպանների, որոնք վաղուց կորցրել են գիւղական պատկերը և յաճախ պաշապանում են ոչ թէ գիւղացիների համայնական, այլ միայն իրենց շահերը:

Ցանկալի է լսել այն երկրագործ և աշխատասէր գիւղացիների կարծիքը, որոնք կապուած են հողի հետ, մշակում են այն և ապրում նրանով: Առանձնապէս օգտակար կլինէր ծանօթանալ գիւղական տեղական կարիքների հետ ծխատէր քահանաների միջոցով, որոնք մօտից ճանաչում են այդ կեանքը: Այդ բոլոր անձանց հրաւիրելն ամբողջապէս կախուած է նահանգապետներից, որովհետև գիւղական և հողեւորականութեան ներկայացուցիչներն յաճախ մասնակցում են դաւառական գեմսավայրի ժողովներին»:

Եկեղեցական շամբուարները դանում է, որ հողեւորականութեան մասնակցութիւնը չափազանց կարևոր է և այդպիսով կը քրտնալուծուի այն թերութիւնը, որ թոյլ են տուել գիւղական տեսական արդիւնաբերութեան նպաստող մասնախմբերը, որոնք կարծես երդուել են ոչ մի հողեւորականի չք հրաւիրել, չընայած, որ վերջիններս քարերից ի վեր գիւղացու հետ են,

Նրանց կեանքովն են ապրում և իրենց շահերով սերտ կապուած են նրանց հետ: Հոգևորականներն գործի չը հրաւիրելն էլ այն հետեանքն ունեցաւ, որ բոլորովին մոռացութեան տրուելի դիւղացու կրօնական բարոյական կեանքը, եթէ անգամ կեանքց այդ մասի վերաբերեալ մի քանի հարցերն ի նկատի առնուեցան, օրինակի համար ասնական օրերի թիւը, այդ էլ տեղի ունեցաւ թերապէս և ոչ գործի պահանջած լըջութեամբ»:

Մեր կողմից չենք կարող չը միանալ եկեղեցական համբաւարերի հետ և չը ցանկալ հոգևորականների մասնակցութիւնն այնպիսի մի լուրջ խնդրում, ինչպէս դիւղական կեանքի բարեփոխութեան խնդիրն է: Անդդէմ լինելով հոգևորականների կողմից առանձին հարցերի պաշտպանութեան, կը կրկնենք, որ դիւղական պատրաստուած, խելացի և բարեխիղճ հոգևորականն աւելի մեծ անգեղութիւններ կարող է առաւ նրա կեանքի լաւ և վատ կողմերի և բարեփոխութեան կարևոր կէտերի մասին, քան աշխարհական որ և է մէկը, միայն լաւ կլինէր, եթէ գիւղացիք իրենք ընտրէին մասնակցութեան արժանի հոգևորականին և ոչ թէ պատահականօրէն հրաւիրուէին նրանք:

Ռուսական եկեղեցին դեռ վերջնականապէս չի վճռել այն խնդիրը, թէ հոգևորականները նշանակովի պէտք է լինին, թէ ժողովրդից ընտրուած: Կարծիքները բաժանուած են երկու մասի և նրանցից իւրաքանչիւրն իրեն պատճառներ է առաջ բերում իւր սկզբունքը պաշտպանելու: Մէկ կողմը գտնում է, որ գիւղացիք ընդունակ չեն գնահատելու արժանաւոր քահանայացուին և հասկանալու այդ պաշտօնի բոլոր պահանջների վստաութիւնը, որ ներկայումս ծխերում բացի անգլիական հոգևորականների դատակներէց, ուրիշ արժանաւոր անձինք չկան մրցակցութեան համար, իսկ եթէ գիւղացիք իրենց միջի գրագէտներից քահանայացու ընտրելու լինին, նրանք այնպիսի սաղմոսաքաղ կիսադրագէտ հոգևորականներ կլինին, որոնց մասին այնքան մեծ էր բողոքն ու արատնջը մօտիկ անցեալում: Նրորորդ արգելքն էլ համարուում է այն, որ մեծամեծ զեղծումներ տեղի կունենան ընտրութիւնների ժամանակ, ինչպէս այդ լինում է տանուտէրներ, գիւղական դատաւորներ և այլ պաշտօնեաներ ընտրելու:

Սմբադրութիւնը վերջնականապէս չը միանալով և ոչ մի կողմին, առաջ է բերում նշանաւոր Պօրֆիրիոս եպիսկոպոսի օրագրից մի հատուած 1846 թուի նոյեմբերի 13 ից, որտեղ

արձանագրուած է հեղինակի խօսակցութիւնը Մոսկովայի փո-
խանորդ Յովսէփ Էպիսկոպոսի հետ: Ուստի հրատարակախօսնե-
րից մինի կարծիքով այդ խօսակցութիւնը կարելի է կոչել եկե-
ղեցական ծրագիր, որը հասունացել է ուսու Էպիսկոպոսի սի-
րող սրտում և մշակուել նրա զօրեղ և կարող խելքով: Երկու
Էպիսկոպոսների յիշեալ խօսակցութեան ժամանակ քննութեան
է առնուել այն խնդիրը, որին ներկայումս նուիրուած է Օրլովի
թերթի յօդուածը: Ահա Պօրֆիրիոս Էպիսկոպոսի կարծիքն այդ
մասին, որ թէև խիստ է և ծայրահեղ, բայց այնուամենայնիւ
արժանի է ուշադրութեան:

«Մեր հոգևորականութիւնը կառտա է և ունի կատայա-
կան պակասութիւններ: Եթէ անգամ նրա շրջանում երևան են
գալիս փայլուն ընդունակութիւններ, նրանց ոյժը թուլանում է
սահմանափակ կրթութեամբ և մարդկային ոգուն մը որոշ ուղ-
ղութիւն տալու՝ դէպի զանգակաաններն ուղղելու ջանքերով:
Թեմական դպրոցների և հող. ճեմարանների դաստիարակները
սակաւակիրթ են և թմրած, իսկ նրանցից եռանդատ և աւելի
ազատամիտներն աշակերտներին տալիս են սուս (կեղծ) գի-
տութեան սաղմներ և սպանում նրանց մէջ բարեպաշտ մայ-
րերի ձեռքով պատուատած հաւատը: Ով որ բնածին ճարտա-
սան է, նա շնորհիւ դպրոցական ձևերի և կանոնների ճնշման,
կամ ոչնչանում է և կամ մեծ ազդեցութիւն չի ունենում հա-
սարակութեան վրայ, որին կարելի է սգևորել, յառիշտակել և
փրկել ոչ թէ արհեստական ճոռածարանութեամբ և ձևերով,
այլ բնական, կենդանի և կրակոս խօսքով... խելացի, որանց
բխած և այնպիսի քարոզով, որի մէջ լուում է մարդկային
սրտեր ճանաչելու խորին գիտութիւնն ու հասարակութեան
հոգևոր կարիքները: Իսկ մեր հասարակութիւնից կարուած թե-
մականներն ու ճեմարանականները մեթէ այդպիսի գիտութիւն
ունին:

Քրիստոնէական եկեղեցին երբէք զեական կառտա չի
ունեցել: Այդ եկեղեցու սուրբ հայրերն ու մեծ սուսցիչները՝ —
Պետրոսիոս Աբխազացին, Իգնատիոս Աստուածակիրը, Պիո-
նիսիոս Աղէքսանդրացին, Տէրատիանոսը, Կիպրիանոսը, Յան
Ոսկեբերանը, Բարսեղ Մեծը, Քրիզոստոմոսը, Ալգուս-
տինոսը և այլն ոչ քահանայապարմ են եղել և ոչ էլ իրենց հայ-
րերիցն են ժառանգել բեմն ու ամբիոնները: Նիկոդայոս Աքան-
չելագործը, Սպիրիդոն Տրիմիֆունտացին, Ղուսիկիանոս քահանան
ու մարտիրոսը այնպիսի ճեմարաններում չեն ստորել, ինչպէս
որ մերոնք են: Չէ որ ուսուաց եկեղեցին դպրոցներ հիմնելուց

առաջ էլ է քահանաներ և եպիսկոպոսներ ունեցել: Բայց Աստուած որտեղից էր դնում նրանց գրուանի վրայ աշխարհին լոյս առաջու: Աշխարհական ընտանիքներից:

Նրբ պրաւօսլաւ քրիստոնեայք՝ ոչ թէ իրենք են ընտրում իրենց հոգեորականներին, այլ անտարբեր կերպով ընդունում են նրանց տէրտէրական գասակարգի միջից, որոնց հոգեոր պահասութիւններն յայտնի է նրանց, և երբ նրանք տեսնում են իրենց հոգեորականներն հետ միայն այն ժամերին, երբ հարկաւոր է ըուրվառն ու ցողիչը, ձէթն ու գերեզմանի բահը, այդ ժամանակ նրանք կորցնում են իրենց կարևոր իմաստուն և սուրբ հոգեոր առաջնորդներին ճանաչելու ընդունակութիւնը, իսկ այդ ընդունակութիւնն ու շնորհքը հին եկեղեցին ունէր և նրանով էլ առաջնորդւում էր:

«Ամբրոսիոս Վեգիօլանացին—գինուօր—նահանգապետ էր, բայց ժողովուրդը նրա մէջ ճանաչեց առաջնորդի՝ դէպի երկինք և չք սխալուեց: Բարեպաշտ Յուսափնիանը կոմս Եփրեմին ուղարկեց վերաշինելու Անտիոքի երկրաշարժից կործանուած պարիսպները, իսկ այնտեղի քրիստոնեայք ճանաչեցին նրա մէջ ուսուցիչ և սուրբ հոգիւ լինելու ընդունակութիւնն և եպիսկոպոսական աստիճանի բարձրացրին: Յաւում եմ, որ այդ բժրեւոտութիւնը կտրել է մեզանում»:

Նրբ նայն խօսակցութեան մէջ Պօրֆիրիոս եպիսկոպոսը նկատել է, որ քահանայ պէտք է ընտրել ազնիւ, միջոցների տէր՝ զրագէտ գիւղացիներից և քաղաքացիներից, սրբազան Յովսէփը պատասխանել է. «Շատ գեղեցիկ բայց դպրանոցաւարաններն աւելի են կրթուած, քան թէ ձեր զրագէտ գիւղացիք. հետևապէս և աւելի արժանի են եկեղեցւոյ պաշտօնէութեան համար» «Սրբազան», եկեղեցւոյ պաշտօնէութեան արժանի են ոչ թէ գոնդող ծնծոյք, այլ այնպիսի քրիստոնեայք, որոնց հաւատը, բարեպաշտութիւնն ու առաքինի կեանքն ամեն տեսակ քարոզից էլ բարձր է»:

Վերոյգրեալից երևում է, որ դեռ մեղանից 50—60 տարի առաջ պրաւօսլաւ—եկեղեցւոյ եպիսկոպոսներից ամենալաւերն ընտրութեան կողմնակից են եղել: Բայց մինչև օրս էլ ռուսական եկեղեցու պաշտօնեաները բոլորն էլ նշանակովի են: Հոգեորականներն ընտրական սկզբունքը եկեղեցին ընդունել է դեռ առաքեալներից և մեր եկեղեցին շարունակում է այդ մինչև մեր օրերը: Բայց ցաւօք սրտի պէտք է ասենք, որ մեր ժողովրդի այդ գեղեցիկ իրաւունքն ի չարն են գործ դնում գիւղի բռունցքներն ու օղեպաշտներն, որոնք վաղուց են իրենց զրա-

ցիների և եղբայրների իրաւունքն ու աշխատանքն իրենց ծառայեցնում: Կսկ որ դպրանոցը, կանոնաւոր դպրանոցը և խելացի տարուած ուսումն ու կրթութիւնը աւելի ընդունակ են իրօք անձնուէր և առաքելի զինուորներ պատրաստելու եկեղեցու համար, դրանում կասկած չկայ: Այդ բանի համար հարկաւոր է դատաւանդել ոչ թէ տասնեակ մեծանուն կրօնական առարկաներ, այլ Աւետարան, Աւետարան և միմիայն Աւետարան՝ առանց փիլիսոփայութիւնների՝ իւր ամբողջ պարզութեամբ:

— Իրագրիներն հաղորդեցին, որ մեծ պասի սկզբից ծխական քահանաներից միքանիսը հրաման ստացան իրենց թեմական իշխանութիւնից՝ խստիւ հետեւելու, որ եկեղեցական—ծխական ուսումնարանների ուսուցիչներն և աշակերտները չը համարձակուին պասուց օրերին ուտեսց կերակուրն ուտել:

Նըջաբերական հրամանն յիշեցնում էր, որ դէթ միանգամ պասը լուծող ուսուցիչները կարձակուին պաշտօնից և այլ ևս չեն ընդունուիլ նոյն իսկ հոգևոր պաշտօններում: Այսպիսի կարգադրութիւնն ի միջի այլոց եղել էր և Եւրասիաւի նահանգում, որտեղ նոյն լրացիւնների ասելով՝ Սիմեօնովսկի անունով մի քահանան յայտնել էր դպրոցական խորհրդին, որ իրեն հրակողութեան յանձնուած շրջանում ուսուցիչներն ու վարժուհիները չը թոյլատրուած օրերին պաս են ուտում:

Կասկած չկայ, որ դպրոցական խորհրդի շրջաբերականը ծխական—եկեղեցական դպրոցների վրայ հսկող քահանաների համար մի անուպատելի բան եղաւ: Յայտնի է, որ մեծ պասը քահանայի համար և մեծ աշխատանքի շրջանն է. ժամերդութեան անողութիւնը, խոտածովանուողների և հաղորդողների ահազին բազմութիւնն՝ առանց այդ էլ յոգնեցնում է իւրաքանչիւր քահանային. իսկ այս կարգադրութեամբ մի մեծ ծանրութիւն էր բարդուած քահանայի վրայ՝ ուսուցիչների և վարժուհիների վրայ հսկելու գործը. մանաւանդ, որ այդ նոր պարտականութիւնն ուղղակի անիրագործելի էր: Քահանան ինչպէս պէտք է հսկէր, որ ուսուցիչը պաս չուտէր, նա հօ ամաններն էլ չը պէտք է զննութեան ենթարկէր: Աշակերտների մասին խօսելը՝ որ միանգամայն անելորդ է: Հէնց միայն նցանց թիւն ի նկատի ունենալով՝ որ և է հսկողութեան միտքն անգամ անիրագործելի է: Այլապէս քահանան հարկադրուած պէտք է լինէր նոյն իսկ գիւղական վաւարաններն ու գեղջկուհիներին քննութեան ենթարկելու, իսկ վերջիններս, ինչպէս յայտնի է, չափազանց խորամանկ են և նրանց բռնելը հեշտ գործ չէ:

Այդպիսով Եւրասիական բարի դիտաւորութիւններն այն հե-
տեանքը կուենան, որ առանց այն էլ նախանձելի կեանք
չունեցող զիւզական հոգեորականներին զուր տեղը կըսկսեն
մեղադրել և յանդիմանել նաև աւելորդ և անտեղի գանգա-
ների համար, որ մի տեղ ուսուցչին կը հեռացնեն հարեցու-
թեան պատճառով, իսկ նա կը յայտարարի, որ քահանայի դաւա-
ճանութիւնն է նրան հեռացնելու պատճառը: Մի և նոյն ժա-
մանակ պէտք է ի նկատի ունենալ, որ վերահսկողութեան իրա-
ւունքը տեղիք կըտայ բազմաթիւ զեղծումների և իբր անձնա-
կան հաշիւներ մտքելու միջոց կճառայի»:

Գրիստոնէական պարտաւորութիւններն անթերի կատարելը,
ինչպէս և պահեցողութիւնը, պէտք է հիմնուած լինին համոզ-
մունքի վրայ: պէտք է ի ներքուստ բխեն և ոչ թէ արդիւնք և
հետեանք լինին հսկողութեան և շրջաբերականների: Համոզեցէք,
հասկացրէք պահեցողութեան հիմքն և նշանակութիւնը և հաւա-
հաւատացած եղէք որ մարդիկ կըզգուին կենդանիների միտն իբրև
կերակուր գործածելուց:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Գերմանական կայսեր քաղաքականութիւնը կրօննէլ իրեն
նպատակների գործիք դարձնելու՝ վաղուց յայտնի է նրա կա-
տարած մի քանի ճանապարհորդութիւններից զէպի Իտալիա
և Նրուսադէմ: Վճռելով օգուտ քաղել այն բոլոր տարրերից և
զէպրերից, որոնք կարող են օգտակար լինել գերմանական ղո-
րութեան, կայսրը՝ բողոքական երկիրների կայսրը, միշտ էլ աշ-
խատել է պաշտպան հանդիսանալ Արևելքում կաթոլիկութեան և
թուլացնել Ֆրանսիայի հեղինակութիւնն ու վարկը կաթոլիկու-
թիւն պաշտպանելու գործում: Նորութիւն չէ այն երևոյթը,
որ Եւրոպական իշխանութիւններն երբէք առիթը ձեռքից չեն
բաց թողել եկեղեցին իրենց քաղաքական նպատակներին ծա-
ռայեցնելու: Ֆրանսիան է, որ կուի է սկսել կաթոլիկ միաբանու-
թիւնների զէմ և հետզհետէ զրկում է նրանց կրթական գործու-
նէութեան մէջ ունեցած ազդեցիկ մասնակցութիւնից: Գերմա-
նիան յատկապէս այս զէպրից էլ օգուտ քաղել կամենալով,
անցեալ ամսին ընդունեց մի օրէնք, որով թոյլատրեց եզուիտների
մուտքը Գերմանիա: Անշուշտ Գերմանիայի այս քայլը մեծ նշա-
նակութիւն կունենայ ջերմեռանդ կաթոլիկների համար և այ-